Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
մայիսի 5-ի N 492 - Ն որոշման

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԶՈՀԵՐԻՆ, ԶՈՀԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀԵՐԻՆ «ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին (այսուհետ՝ զոհեր) «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը նպատակ ունի սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական և օրենքով նախատեսված աջակցության այլ միջոցների կիրառմամբ օգնելու զոհերին բարելավել իրենց կենսագործունեությունը, հիմնական կենսական կարիքների բավարարումը, սոցիալական պաշտպանության միջոցով աջակցել նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, հասարակությանը լիարժեք վերաինտեգրմանը:

3. Օրենքով սահմանված աջակցության դրույթները կիրառվում են միայն զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, նրա կարիքների գնահատման հիման վրա:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) ապահովում է աջակցության տրամադրումը և համակարգում է սոցիալական ծառայություններ տրամադրող հիմնարկների ու կազմա-

կերպությունների գործողությունները՝ ուղղված զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգմանը:

5. Զոհերին միանվագ դրամական փոխհատուցման, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերի կարգավորման շրջանակներից դուրս նաև պետության կողմից չերաշխավորված աջակցության տեսակների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական միջոցների, իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախարարությանը հատկացված՝ թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների բյուջետային ծախսերը ֆինանսավորող ծրագրի միջոցները նախատեսվում են թրաֆիքինգի զոհերին սոցիալ հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման, նրանց մատչելի, բազմակողմանի ու օպերատիվ աջակցության կազմակերպման համար:

7. Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 851-Ն որոշմամբ հաստատված կարգով ընտրված գործընկեր հասարակական կազմակերպության (այսուհետև՝ կազմակերպություն) միջև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ կնքվում է սուբսիդիայի տրամադրման պայմանագիր: Սուբսիդիայի տրամադրման պայմանագրում նշվում են՝

1) բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծրագրի անվանումը և համառոտ բովանդակությունը, որի շրջանակներում տրամադրվում է սուբսիդիան.

2) մատուցվող ծառայությունների նկարագիրը.

3) մատուցվող ծառայության մեկ միավորի սահմանված գինը.

4) մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակը և դրա փոփոխման պայմանները.

5) մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը.

6) սուբսիդիայի առավելագույն չափը.

7) պայմանագրում կարող են նախատեսվել օրենքով նախատեսված աջակցության հետևյալ տեսակների տրամադրման պայմանները՝

ա. բժշկական օգնություն,

բ. հոգեբանական օգնություն,

գ. իրավաբանական օգնություն,

դ. խնամքի տրամադրում,

ե. թարգմանչական ծառայությունների մատուցում,

զ. կրթական, աշխատանքի տեղավորման և, անհրաժեշտության դեպքում, այլ ծառայություններ, որոնք կազմակերպությունն իրականացնում է մասնագիտացված կազմակերպությունների միջոցով.

8) պայմանագրով սահմանված պայմանների չկատարման համար կողմերի պատասխանատվությունը:

8. Սուբսիդիայի պայմանագրով սուբսիդիայի հիմքում դրվող ծախսերի տարբերակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1358-Ն որոշմամբ սահմանված կարգով:

9. Իրավասու մարմինը կամ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովը սահմանված կարգով զոհին ուղղորդում է աջակցություն իրականացնող կազմակերպություն, որի հետ կնքվել է սույն կարգի 7-րդ կետով նախատեսված սուբսիդիայի հատկացման պայմանագիրը:

10. Կազմակերպությունը կազմակերպում է զոհի տեղափոխումը և ընդունելությունը կազմակերպության ժամանակավոր կացարանում՝ սույն կարգի դրույթներին համապատասխան: Կացարանը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով սահմանված պահանջները բավարարող սանիտարահիգիենիկ և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով, ունենա «վստահության հեռախոս» սոցիալական ծառայություն՝ որակավորում ունեցող խորհրդատուի հետ անանուն հեռախոսազրույց ապահովելու համար:

11. Ժամանակավոր կացարանը տրամադրվում է՝

1) հավանական զոհերին նախանույնացման փուլի տևողությամբ՝ 10 օրից մինչև մեկ ամիս ժամկետով, հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա. իրավասու մարմնի ներկայացմամբ,

բ. գործընկեր հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ,

գ. հավանական զոհի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա.

2) զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին նույնացման գործընթացի ավարտից հետո՝ մինչև 12 ամիս ժամկետով, նույնացման հանձնաժողովի՝ անձին զոհ ճանաչելու մասին որոշման հիման վրա:

12. Աջակցություն և (կամ) պաշտպանություն տրամադրելու մասին կայացված որոշման, ինչպես նաև իրավասու մարմնի միջնորդության մեջ հստակ նշվում են աջակցության և (կամ) պաշտպանության այն տեսակները, որոնք անհրաժեշտ է տրամադրել տվյալ զոհին:

13. Ժամանակավոր կացարանում զոհի ընդունելությունն իրականացվում է շուրջօրյա: Անհրաժեշտության դեպքում կացարան տրամադրվում է նաև հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցչին և (կամ) զոհի խնամքի տակ գտնվող երեխային:

14. Ժամանակավոր կացարան տեղափոխված անձին զննում է կացարանի բժիշկը, որոշում ընդունելության համար բժշկական հակացուցումների առկայությունը կամ բացակայությունը և առաջարկում է անհրաժեշտության դեպքում անձին սանիտարական մշակման ենթարկել:

15. Ժամանակավոր կացարանում կացարանի համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը գրանցում է զոհի մասին տվյալները զոհերի հաշվառման մատյանում, որտեղ գրանցվում են նաև հատուկ կատեգորիայի զոհի հետ կացարանում բնակվող օրինական ներկայացուցչի և (կամ) զոհի խնամքի տակ գտնվող երեխայի տվյալները:

16. Հաշվառման մատյանի ձևը և վարման կարգը հաստատում է կազմակերպության ղեկավարը:

17. Կացարան ընդունված յուրաքանչյուր զոհի համար լրացվում է հաշվառման քարտ, որտեղ գրանցվում են՝

1) անձի անունը, հայրանունը, ազգանունը.

2) ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) անձը հաստատող փաստաթղթի տվյալները (առկայության դեպքում).

4) ընտանեկան դրությունը.

5) անձի մասին տեղեկատվության տրամադրման աղբյուրը.

6) կացարան տրամադրելու և կացարանից դուրս գրելու օրը, ամիսը, տարեթիվը:

18. Հաշվառման քարտի ձևը հաստատում է կազմակերպության ղեկավարը: Զոհի հաշվառման քարտը պահվում է նրա անձնական գործում, որը պարունակում է նրա անձը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), նույնացման հանձնաժողովի որոշման քաղվածքը և (կամ) իրավասու մարմնի միջնորդությունը, սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը:

19. Անձին կրկին կացարան ընդունելու դեպքում հաշվառման քարտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում:

20. Անձը չի կարող ընդունվել կացարան, եթե տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի N 1286 որոշմամբ հաստատված և խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով և այլ վարակիչ հիվանդությամբ: Այդ դեպքում կազմակերպությունը հիվանդ զոհի մասին տեղեկացնում է նախարարությանը, որը միջնորդում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հիվանդի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ նրա բուժման հարցը լուծելու համար:

21. Ժամանակավոր կացարանի սոցիալական աշխատողը, ամփոփելով սույն կարգի 15-րդ և 17-րդ կետերով սահմանված տվյալներն ու տեղեկությունները, ինչպես նաև զոհի հետ հարցազրույցի արդյունքները, գնահատում է նրա սոցիալական կարիքները և կազմում է անհատական սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագիր:

22. Կացարանի սոցիալական աշխատողը և համապատասխան լիազորություններով օժտված մյուս աշխատողները (պաշտոնատար անձինք) մշակում, պարբերաբար վերանայում և յուրաքանչյուրն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում են զոհի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումներ:

23. Հատուկ կատեգորիայի զոհի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները մշակելիս, վերանայելիս և իրականացնելիս հաշվի է առնվում նաև նրա օրինական ներկայացուցչի կարծիքը, եթե այն բացասաբար չի ազդի վերականգնման գործընթացի վրա կամ չի խոչընդոտի դրա արդյունավետ իրականացմանը:

24. Ժամանակավոր կացարանում զոհին հատկացվում է մահճակալ՝ անկողնային սպիտակեղենի լրակազմով, ներքին սպիտակեղեն և անձնական հիգիենայի պարագաներ

(սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ և այլն), անհրաժեշտության դեպքում՝ երեխաների խնամքի պարագաներ, սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ:

25. Զոհերին կարող են տրամադրվել նաև օրենքով նախատեսված աջակցության հետևյալ տեսակները՝

1) բնաիրային օգնություն.

2) անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում.

3) բժշկական օգնություն և սպասարկում.

4) հոգեբանական օգնություն.

5) խորհրդատվական օգնություն.

6) իրավաբանական օգնություն.

7) խնամքի տրամադրում.

8) թարգմանչական ծառայությունների մատուցում.

9) կրթական, մասնագիտացված բժշկական, աշխատանքի տեղավորման և այլ ծառայություններ, որոնք կազմակերպությունն իրականացնում է մասնագիտացված կազմակերպությունների միջոցով.

10) անվտանգ վերադարձի կազմակերպում.

11) միանվագ դրամական փոխհատուցում:

26. Զոհին, ինչպես նաև հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցչին և (կամ) զոհի խնամքի տակ գտվող երեխային կազմակերպությունը տրամադրում է բնաիրային օգնություն՝ նրանց անհատական կարիքներին համապատասխան: Այն նպատակային է, հասցեական և ուղղված է անձի հիմնական կարքների բավարարմանը: Օգնությունը ներառում է սնունդ, հագուստ, կոշիկ, հիգիենայի միջոցներ, երեխաների խնամքի

պարագաներ, առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ: Օգնության տեսակը և չափը որոշվում է անհատական, յուրաքանչյուր անձի համար:

27. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է զոհին ստանալու անձը հաստատող և սոցիալական ծառայություններ տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթեր (ատեստատ, դիպլոմ, նախկինում աշխատելու մասին տեղեկանք, ծննդյան վկայական և այլ փաստաթղթեր)՝ դրանց բացակայության դեպքում: Անհրաժեշտության դեպքում աջակցում է համապատասխան փաստաթղթերը ձևակերպելու և համապատասխան մարմիններ ներկայացնելու հարցերում՝ կենսաթոշակ, նպաստ, օրենսդրությամբ սահմանված այլ վճարներ ստանալու, բժշկա-սոցիալական փորձաքննության և սոցիալական որոշակի խնդիրները լուծելու նպատակով:

28. Կազմակերպությունը կազմակերպում է կացարանում գտվող անձանց բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ նրանց՝ այնտեղ գտնվելու ողջ ընթացքում:

29. Անհետաձգելի բժշկական օգնությունը ցուցաբերվում է հավանական զոհին նախանույնացման փուլում՝ կացարանի գտնվելու վայրի համապատասխան բժշկական հաստատության և (կամ) կացարանի բժշկի կողմից:

30. Բժիշկը կատարում է անձի առողջական վիճակի նախնական զննում և կայացնում է համապատասխան եզրակացություն: Բժշկական ցուցումների հիման վրա անձը ստանում է ամբուլատոր բուժում և ապահովվում է առաջին բժշկական օգնության անհրաժեշտ դեղորայքով:

31. Կազմակերպության բժիշկի կողմից յուրաքանչյուր անձի համար լրացվում է մեծահասակների (մանկական) ամբուլատոր բժշկական քարտ, որտեղ գրանցվում են նրա անձնական տվյալները, բժշկական զննության արդյունքները, ցուցաբերված բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու նկարագրությունը, կցվում են համապատաս-

խան հաստատության կողմից իրականացված լաբորատոր ախտորոշիչ հետազոտություն-ների արդյունքները:

32. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային ու հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվա-կանի մարտի 4-ի N 318-Ն որոշման:

33. Անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը զոհի կամ հատուկ կատե-գորիայի զոհի օրինական ներկայացուցչի համաձայնությամբ դիմում է նախարարություն՝ հիվանդին համապատասխան բժշկական հաստատություն ուղեգրելու համար: Նախա-րարության միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնա-գավառում կառավարության լիազորած պետական մարմինը կազմակերպում է հիվանդի ուղեգրումը համապատասխան բժշկական հաստատություն:

34. Զոհի՝ վարակիչ, այդ թվում՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվան-դությամբ հիվանդ լինելու դեպքում կազմակերպության բժիշկը կամ այլ իրավասու աշխա-տողը անհապաղ մեկուսացնում է նրան՝ կացարանում գտնվող այլ անձանց հետ տվյալ անձի անմիջական շփումը բացառելու համար և մեկօրյա ժամկետում այդ մասին տեղե-կացնում է նախարարությանը՝ մասնագիտացված բժշկական հաստատություն հիվանդի տեղափոխումը սահմանված կարգով կազմակերպելու համար:

35. Հոգեբանական օգնությունը տրամադրվում է անձի՝ թրաֆիքինգի կամ շահա-գործման ենթարկվելու հետևանքով առաջացած անկայուն հոգեբանական վիճակը վերա-կանգնելու, սթրեսը հաղթահարելու, սոցիալական կապերը վերականգնելու, ընտանիքի հետ հարաբերությունները վերահաստատելու, կարողությունները ամրապնդելու, անկա-խության և ինքնաբավության համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար:

36. Զոհին հոգեբանական օգնություն տրամադրելու նպատակով կացարանի սոցիալական աշխատողները և հոգեբանը գնահատում են նրա հոգեբանական վիճակը, մշակում են, պարբերաբար վերանայում են հոգեբանական վերականգման համար անհրաժեշտ միջոցառումներ և իրականացնում են համապատասխան աշխատանքներ՝ զոհի հոգեկան կյանքի կարգավորման, սոցիալական միջավայրին հարմարվելու, սթրեսային վիճակներին դիմակայելու, սոցիալական հմտությունները զարգացնելու և հասարակական կյանքում նրանց ներգրավելուն աջակցելու նպատակով:

37. Հոգեբանական օգնություն տրամադրելիս հաշվի են առնվում զոհի անհատական կարիքները:

38. Խորհրդատվական օգնությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետևանքով ստեղծված իրավիճակից դուրս գալու, սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների, հասարակությանը սոցիալական վերաինտեգրմանն ուղղված խորհուրդների և առաջարկությունների, ինչպես նաև համարժեք աջակցություն ստանալու վերաբերյալ զոհերին և նրանց օրինական ներկայացուցիչներին տեղեկատվության տրամադրումն է:

39. Իրավաբանական օգնությունն իրավաբանական խորհրդատվությունն է, ինչպես նաև իրավաբանական աջակցությունն է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, փաստաթղթերի վերականգման կամ դրանց բացակայության դեպքում դրանք ձեռք բերելու, պետական ծառայություններից օգտվելու և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով համապատասխան ծառայությունների մատուցումն է:

40. Հատուկ կատեգորիայի զոհերի, ինչպես նաև տարեց և հաշմանդամություն ունեցող զոհերի խնամքը (ներառյալ համապատասխան հաստատություններում) կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի

25-ի N 1112-Ն որոշմանը համապատասխան: Խնամքը կարող է տրամադրվել ինչպես կացարանում՝ կացարանի աշխատողների կողմից՝ խնամքի համար օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պայմանների առկայության պարագայում, այնպես էլ՝ նախարարության միջնորդությամբ՝ համապատասխան լիազորություններով օժտված մարմինների ուղեգրմամբ խնամք տրամադրող հատուկ հաստատություններում:

41. Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է զոհին թարգմանչական ծառայությունների տրամադրում՝ նրան հասկանալի լեզվով բանավոր թարգմանություն տրամադրելու, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի գրավոր թարգմանություններ ապահովելու համար:

42. Կացարան տրամադրող կազմակերպությունը, համագործակցելով համապատասխան ուսումնական հաստատությունների հետ, կազմակերպում է կացարանում գտնվող երեխաների կրթությունը, որը կարող է իրականացվել ինչպես մասնավոր դասընթացների միջոցով, այնպես էլ՝ հանրակրթական կամ հատուկ դպրոցներում:

43. Համագործակցելով նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական գործակալության» հետ՝ կազմակերպությունն աջակցում է զոհին օգտվելու «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու իրավունքից:

44. Նախանույնացման փուլում, հավանական զոհի նկատմամբ մարդասիրական դրդումներից ելնելով, կիրառվում են օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված սոցիալական աջակցության անհետաձգելի միջոցները, եթե նա ակնհայտորեն աջակցության կարիք ունի:

45. Աջակցությունը դադարեցվում է՝

1) հավանական զոհերին՝ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նույնացման հանձնաժողովի որոշման հիման վրա.

2) զոհերին՝ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում՝ նույնացման հանձնաժողովի որոշման հիման վրա:

46. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով աջակցության դադարեցման դեպքում աջակցության դադարեցման մասին նույնացման հանձնաժողովի որոշմամբ բոլոր զոհերին տրվում է միանվագ դրամական փոխհատուցում ստանալու հնարավորություն: Դրամական փոխհատուցման տրամադրումն ուղղված է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու ընթացքում անձի կրած վնասների մասնակի փոխհատուցմանը և կազմում է 250000 դրամ:

47. Սույն կարգի 46-րդ կետում նախատեսված գումարը փոխանցվում է զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցչի կողմից ընտրված բանկում նախօրոք բացված բանկային հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ